



16:30 - 25 / Հունվար / 2013

ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համար կարևոր խնդիր է քաղաքական հայագիտությունը



Ինստիտուտի ավագ գիտաշխատող Ալիկ Ղարիբյանն «Արմենպրես»-ի մեր գործընկերների հետ զրույցում նշեց, որ հատկապես, հաշվի առնելով հարևան երկրների կողմից հակահայ քարոզչությունը, փաստերը խեղաթյուրելու խնդիրը, օրակարգային է դարձել դրանց հակադարձումը, հանրամատչելի ձևով ճշմարտությունն օտար լսարանին ներկայացնելու խնդիրը: Այդ նպատակով արդեն ստեղծված է տեղեկատվական անվտանգության գիտահետազոտական կենտրոն, որը թիմային աշխատանքի արդյունք է: Գործում է կենտրոնի կայքը՝ www.karabakhcenter.com, որտեղ ութ լեզուներով՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, իսպաներեն,

հասանելի է օբյեկտիվ տեղեկատվություն Արցախին առնչվող թեմաների մասին: Ղարիբջանի փոխանցմամբ՝ արդեն իսկ գրված նյութեր կան, շարունակվելու են աշխատանքները, թիրախային հոդվածներ են տպագրվելու, այդ նպատակով համախմբվելու են ուժերը: Կենտրոնում գործում է խորհուրդ՝ ի դեմս ԵՊՀ ռեկտորի, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրենի, «Նորավանք» հիմնադրամի տնօրենի: Կենտրոնը կարևորում է մենագրության ստեղծումը, որը պատասխան կտա բոլոր հարցերին, այստեղ մշտական թարգմանչական աշխատանքներ իրականացնողներ ևս կան, ովքեր հիմնականում երիտասարդ մասնագետներ են, այդ թվում՝ մայր բուհի ռումանագերմանական և արևելագիտության ֆակուլտետներից: ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը շարունակելու է նաև իր աշխատանքները: Ղարիբջանի խոսքով՝ իրենք հաջողությունների են հասել մի քանի ոլորտներում, հատկապես՝ մենագրությունների: Հետազոտական աշխատանքների օրինակներից նա առանձանցրեց Լուսինե Սահակյանի՝ համշենահայությանը վերաբերող եռալեզու աշխատանքը, որն ԱՄՆ-ում մրցանակի է արժանացել: Ինստիտուտը շարունակում է ուշադրության կենտրոնում պահել Ցեղասպանության հիմնախնդիրներին վերաբերող հուշագրությունների ներկայացումը: Հրատարակվել և ընթացքի մեջ են մի քանի հայտնի միսիոներների աշխատանքներ. նրանց մեջ կան այնպիսիք, ում աշխատությունները հայտնի չեն կամ միայն ժերմաներենում են հասանի:

ձեռքբերումներից է համարում նաև իր հեղինակած՝ «Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը և Մեծ Բրիտանիան 1918-1920 թթ.» գիրքը, որտեղ ներկայացված է Արցախի խնդիրը համաշխարհային քաղաքականության մեջ, զուգահեռներ են տարված մերօրյա գոյամարտի հետ, ընդգրկված են փաստաթղթեր, լուսանկարներ: Ինստիտուտի ջանքերով քարտեզագրության լաբորատորիա է ներկայացված Հայաստանի ազգային ատլասը:
